ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 11-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի N 88-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, «ՏԵՍԱԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «է» կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի N 270-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 18-րդ և 20-րդ ենթակետերով, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի մայիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2022 թվականի օգոստոսի 9-ի N 28-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու և «Տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» N 7-Լ հրամանի հավելվածի 26-րդ կետի 9-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պետի 2023 թվականի հունվարի 20-ի «Ոստիկանության տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության նախահաշիվը հաստատելու մասին» N 88-Ա հրամանը:

2. Հաստատել «Տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2023 թվականի նախահաշիվը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2023 թվականի հունիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ

«09» հունիս 2023թ.

ք. Երևան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարի
2023 թվականի հունիսի 9 N 11-Լ հրամանի

ՆԱԽԱՀԱՇԻՎ
«ՏԵՍԱԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
2023թ. դրամական միջոցների հոսքերի

/հազար դրամ/

Հ/Հ	Հոդվածների անվանումը	Հաշվետու ժամանակաշրջան
		2023 թվական
	Տարեսկզբի ազատ մնացորդ	**187,218.8**
I	**ԸՆԹԱՑԻԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝ այդ թվում**	**3,210,000.0**
2	**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ**	**3,210,000.0**
II	**ԾԱԽՍԵՐ՝ այդ թվում**	**3,397,218.8**
Ա.	**ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝**	**2,912,198.4**
1	**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ**	**1,625,321.6**
2	**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ**	**889,891.4**
2.1	Շարունակական ծախսեր	**224,556.0**
2.2	Ծառայողական գործուղումների գծով ծախսեր	**7,000.0**
2.3	Պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերում	**322,090.4**
2.5	Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)	**319,030.0**
2.6	Նյութեր (ապրանքներ)	**17,215.0**
7	**ԱՅԼ ԾԱԽՍԵՐ**	**396,985.4**
7.2	Հարկեր, պարտադիր վճարներ և տույժեր, որոնք կառավարման տարբեր մակարդակների կողմից կիրառվում են միմյանց նկատմամբ	**396,985.4**
Բ	**ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ**	**485,020.4**
ԲԱ	**ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ**	**485,020.4**
1	**ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**	**485,020.4**